27.01.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
հունվարի 27-ի N 100 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2005 թվականի
օգոստոսի 18-ի N 2085-Ն որոշման

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒՉԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գլխարկ՝ մուգ կանաչավուն օքսֆորդ կտորից: Կազմված է գլխարկահովհարից և երկու կողմերից փոքր երկուական օդանցքերից: Գլխարկի կենտրոնում ամրացվում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանը (N 3 հավելված, նկարներ NN 1, 2, 3 և 4):

2. Տաբատ՝ մուգ կանաչավուն օքսֆորդ կտորից: Առջևամասի վերևի արտաքին 2 գրպանները թեք են, ներքևի 4 գրպանները շրջվում են հետևամաս, կոճկվում են շղթայով և կպչուկով: Հետևամասի աջ և ձախ կողմերում՝ կպչուկով կոճկվող գրպաններ, ներսում՝ փոքր, չկոճկվող գրպաններ (N 3 հավելված, NN 1, 2, 3 և 4):

3. Գոտին՝ բնական կաշվից, գոտեմակօղերով, ռեզիններով և զենքի համար նախատեսված պատյանով: Կոճկվում է 1 կոճակով և շղթայով:

4. Շապիկ՝ կանաչավուն կամ սպիտակ լակոստ կտորից, կարճաթև: Վզի բացվածքը՝ ուղիղ և օձիքով: Շապիկի աջ կրծքամասում՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանը (N 3 հավելված, նկար NN 2 և 4):

5. Բաճկոն՝ մուգ կանաչավուն օքսֆորդ կտորից: Կոճկվում է շղթայով: Թևերը և ներքևի հատվածը՝ ռեզինե: Ձախ թևի վերին հատվածում՝ կպչուն կտորին, ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Աջ թևի վերին հատվածում՝ կպչուն կտորին, ասեղնագործված է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանը:

Առաջնամասում՝ տարբերանշանների երկայնությամբ, առկա են 2 հորիզոնական շղթայով կոճկվող գրպաններ: Ներսի սինտիպոնը՝ 4 սմ (N 3 հավելված, նկար NN 1 և 3):»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ